

Կովկասյան բարոմետր 2015

Հետազոտության համառոտ նկարագրությունը

Կովկասյան բարոմետրը (ԿԲ) միջերկրային հետազոտություն է, որն իրականացվում է Հարավային Կովկասի երեք երկրներում՝ Հայաստանում, Ադրբեջանում և Վրաստանում: Ծրագիրը նպատակամղված է տարածաշրջանում սոցիալական, քաղաքական և տնտեսական գործընթացների վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությանը: Առաջին հարցումը իրականացվել է 2004թ.-ին երեք երկրների մայրաքաղաքներում: Սկսած 2006թ.-ից հետազոտությունն ընդգրկում է ինչպես մայրաքաղաքներն, այնպես էլ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերը¹:

2015թ. Կովկասյան բարոմետրն իրականացվել է միայն Հայաստանում և Վրաստանում:

Հարցման գործիքակազմը

Հարցման համար օգտագործվող հարցաթերթը կազմվել է Հարավային Կովկասի երեք երկրները ներկայացանող մասնագետ հետազոտողների կողմից:

Հիմնական հարցաթերթը պարունակում է Հարավային Կովկասի երկրներում ժողովրդագրական, սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ ավելի քան 100 հարց՝ ինչպես անհատական, այնպես էլ տնային տնտեսությունների մակարդակով: Թեև հիմնական հարցաթերթը մնում է անփոփոխ, տարբեր երկրներում այս կամ այն տարում ընթացող սոցիալական, քաղաքական և տնտեսական առանձնահատուկ զարգացումներին հետևելու նպատակով ներմուծվում են որոշ նոր հարցեր: Օրինակ՝ 2015 թվականին Հայաստանում օգտագործված հարցաթերթում ընդգրկվել են հարցեր Մահմանադրական բարեփոխումների և Կուտակային կենսաթոշակային համակարգի մասին:

Հարցման մեթոդաբանությունը

Նախորդ տարիների նման, 2015 թվականին ևս Հայաստանի և Վրաստանի չափահաս բնակչության հարցման համար կիրառվել է բազմաստիճան կլաստերային ընտրանքը: Յուրաքանչյուր երկրում տարանջատվել են մայրաքաղաքային, քաղաքային և գյուղային մակրոստրատաները: Ընտրանքի առաջին փուլում յուրաքանչյուր ստրատայում պատահականորեն ընտրվել են ընտրատեղամասերը՝ ըստ ընտրողների թվի համամասնության: Երկրորդ փուլում յուրաքանչյուր ընտրատեղամասում հարցման ենթակա տնային տնտեսությունների ընտրությունը կատարվել է պատահական սկզբնակետից կանոնավոր քայլքի մեթոդով: Վերջին՝ երրորդ փուլում, տնային տնտեսություններում հարցվող անդամի ընտրության համար կիրառվել է Քիշի աղյուսակը: Դեմ առ դեմ հարցազրույցներով 2015թ. հարցվել է 4120 չափահաս (1869՝ Հայաստանում և 2251՝ Վրաստանում):

Տվյալների հասանելիությունը

Հարցաթերթը, ցուցադրաքարտերը, ընտրանքի մեթոդաբանության մանրամասն նկարագրությունը, տվյալների շտեմարանը (SPSS և STATA ֆորմատներով) և որոշ արդյունքներ զետեղված են Կովկասյան Բարոմետր² և ՀՌԿԿ-Հայաստանի³ պաշտոնական վեբկայքերում:

ՀՌԿԿ-Հայաստանն իր գործունեությունն սկսել է 2003 թվականին՝ որպես Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի մայրաքաղաքներում հիմնված Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների ցանցի մի մաս: Երկար տարիներ զարգանալով Նյու Յորքի Կարնեգի կորպորացիայի, Եվրասիա համագործակցություն հիմնադրամի և Երևանի պետական համալսարանի ծանրակշիռ աջակցությամբ՝ 2013թ. հուլիսին ՀՌԿԿ-Հայաստանը ստացել է անկախ հիմնադրամի կարգավիճակ՝ շարունակելով հետամտել հասարակագիտական հետազոտություններն ու հանրային քաղաքականության վերլուծությունը խթանելու հիմնական նպատակը:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՌԿԿ-Հայաստան:

ՀՌԿԿ-Հայաստան

Երևան 0025, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ գրադարանի մասնաշենք, 6-րդ հարկ, 602 սենյակ:
Հեռ./ֆաքս՝ +374 10 57 48 68
+374 10 57 48 98

Էլ. փոստ՝ crrc@crrc.am

Կայք՝ www.crrc.am

¹Հարցումներ երբևէ չեն անցկացվել Լեռնային Ղարաբաղում, Նախիջևանում, Աբխազիայում և Հարավային Օսիայում:

² www.caucasusbarometer.org

³ <http://www.crrc.am/research-and-surveys/caucasusbarometer/documentation>